Ազգային ուսումնական օլիմպիադա

Պատմություն

II փուլ

X-XII դասարաններ

2020-2021 ուսումնական տարի

Հրահանգ 1-2 առաջադրանքների համար. *Ժամանակագրական սկզբունքով դասավորեք ներկայացված տեղեկությունները: Պատասխանները նշեք վանդակներում: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:*

1. **Ժամանակագրական սկզբունքով դասավորեք քաղաքներն՝ ըստ դրանց հիմնադրման ժամանակի.**
   1. Ալեքսանդրիա
   2. Երուսաղեմ
   3. Հռոմ

2. **Ժամանակագրական սկզբունքով դասավորեք հին հույն պատմաբանների անունները՝ ըստ նրանց գործունեության ժամանակի.**

1. Ստրաբոն
2. Պլուտարքոս
3. Հերոդոտոս

Հրահանգ 3-5 առաջադրանքների համար. *Համապատասխանեցրեք իրար երկու սյունակում տրված տեղեկությունները: Յուրաքանչյուր առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 4:*

3. Որոշեք համապատասխանությունը պատմական վեպերի և վեպերում զարգացող պատմական իրադարձությունների միջև.

	Պատմական վեպ		**Պատմական իրադարձություն**
A	93 թվականը (Հյուգո)	1	Ամերիկայի պայքարն անկախության համար
B	Ում մահն է գուժում զանգը (Հեմինգուեյ)	2	Ֆրանսիայի կրոնական պատերազմներ
C	Մոնթեսումայի դուստրը (Հագարդ)	3	Ֆրանսիայի Մեծ հեղափոխություն
D	Մարգո թագուհին (Դյուման)	4	Անգլիայի հեղափոխություն
		5	Իսպանիայի քաղաքացիական պատերազմ
		6	Աշխարհագրական մեծ հայտնագործություններ

4. Որոշեք համապատասխանությունը պատմական տեսարժանության և քաղաքի անվանման միջև, որտեղ այն գտնվում է.

	Ճարտարապետական հուշարձան		Քաղաք
A		1	Բարսելոնա
B		2	Պիզա
C		3	Փարիզ

D		4	Բուդապեշտ
		5	Լոնդոն
		6	Ֆլորենցիա

5. Որոշեք համապատասխանությունը դիմանկարների և պատմական անձանց միջև.

	Դիմանկար		Պատմական անձ
A		1	Թեյմուրազ I
B		2	Էրեկլե I

C		3	Լևան II Դադիանի
D		4	Գիորգի Սաակաձե
		5	Վամեխ Դադիանի
		6	Ռոստոմ Խան

Հրահանգ առաջադրանքի համար 6. *Ուշադիր ուսումնասիրեք նկարները և պատասխանեք հարցերին: Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 7:*



Հարցեր.

(1) 6.1. Անվանեք այն անձին, ում անունը կրում է այն քաղաքակրթությունը, որին վերագրվում են նկարում պատկերված կառույցի մնացորդներն ու վերակառուցումը:

(2) 6.2. Ո՞ր կղզու վրա և ո՞ր քաղաքում են գտնվում նկարում պատկերված կառույցի մնացորդները:

(2) 6.3. Նշեք ճարտարապետի անունը, որն ըստ ավանդության, կառուցել է նկարում պատկերված կառույցը և ի՞նչ անվամբ են հայտնի այս տիպի կառույցները:

(2) 6.4. Ո՞ր առասպելական արարածն էր ապրում նկարում պատկերված կառույցում և, ըստ ավանդության, ո՞վ է նրան սպանել:

Հրահանգ առաջադրանքի համար 7 . Ստորև տրված է տեքստ, որտեղ ներկայացված են երկու տարբեր դիրքորոշումներ մեկ կոնկրետ պատմական փաստի վերաբերյալ՝ Ղութլու-Արսլանի համախոհների շարժումը և նրանց սոցիալական կարգավիճակը:
Ուշադիր ծանոթացեք տեքստին, ապա տեքստում ներկայացված թեմայի շուրջ գրեք փաստարկային էսսե:

Հաշվի առեք, որ էսսեն անպայման պետք է ներառի՝

1. տարբեր տեսակետեր Ղութլու-Արսլանի համախոհների սոցիալական կարգավիճակի վերաբերյալ,
2. փաստարկներ, որոնց միջոցով հիմնավորվում են այդ տեսակետերը,
3. գնահատեք Ղութլու-Արսլանի համախոհների շարժման նշանակությունը: Փաստարկներով հիմնավորեք ձեր տեսակետը՝ նախատեսելով աշխարհի այլ երկրներում զարգացած նմանատիպ իրադարձությունները:

- Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Դատողությունները պետք է լինեն տրամաբանական և պարբերություններով առանձնացված:

- Հաշվի առեք. դատողությունը պետք է պարունակի առնվազն 120 բառ, հակառակ դեպքում գրավորը չի ստուգվի:

- Գրավորը չի ստուգվի նաև այն դեպքում, եթե այն ամբողջությամբ չի համապատասխանում առաջադրանքին կամ պարունակում է այնքան լեզվաբանական սխալներ, որ անհնար է հասկանալ միտքը:

- Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 9:

Ղութլու-Արսլանի համախոհների սոցիալական կարգավիճակը

«Ղութլու-Արսլանի համախոհների սոցիալական կարգավիճակի հարցի շուրջ գոյություն ունի երկու տեսակետ:

Առաջին տեսակետի համաձայն՝ Ղութլու-Արսլանի համախոհները մեծատոհմիկ ընդդիմադիրներ էին, որոնց շարժումը նպատակ ուներ ապագայում ընդլայնել իրենց տոհմական շահերը:

Երկրորդ տեսակետի համաձայն՝ խռովարարները ոչտոհմիկ, ցածր սոցիալական ծագում ունեցող, «հարստությամբ վսեմացած», այսինքն՝ երրորդ դասի ներկայացուցիչներ էին և նրանց շարքերում ընդգրկված էին էապես հարուստ քաղաքացիներ:

Հատկապես նշում են այն փաստարկը, որ Ղութլու-Արսլանի խռովությունից հետո առաջադիմած անձանցից անպիսին, ինչպիսին էր, օրինակ Աբուլասանը, դուրս է եկել երրորդ դասի՝ քաղաքացիների շարքերից, ինչը բավարար երաշխիք է տալիս մտածելու, որ Ղութլու-Արսլանի համախոհները նույնպես հարուստ քաղաքացիներ էին: Թեև Ղութլու-Արսլանի գործողությունները չենք կարող համարել միայն հարուստ քաղաքացիների շարժում, քանի որ նրանց պահանջները հնարավոր չէ, որ չհամընկնեին թագավորական իշխանության դեմ ազնվատոհմ ֆեոդալների նկրտումների հետ: Հետևաբար, այս խմբում ընդգրկված էին նաև այն մեծամեծները, որոնց շահերը որոշ հանգամանքներում համընկնում էին քաղաքային շրջանակների շահերի հետ ...

Այն, որ Ղութլու-Արսլանի համախոհների կազմը բաղկացած էր երրորդ դասի ներկայացուցիչներից, ասես պարզ է դառնում, նաև ելնելով նրանից, որ համախոհները գործում էին տիպիկ երրորդ դասի ծրագրով, որի հիմնական տարրը իշխանությունների բաժանման պահանջն էր:

Այն կարծիքը, որ Ղութլու-Արսլանը և նրա համախոհները «հարստությամբ վսեմացած», ոչտոհմիկների, երրորդ դասի ներկայացուցիչներ էին, անվերապահորեն դժվար է ընդունել: Դժվար է, օրինակ, պատկերացնել Ղութլու Արսլանի ցածր ծագումը միայն Թամարի պատմաբանի տհաճ արտահայտությունների (ջորի, տղա) համաձայն, քանի որ, եթե այդ արտահայտություններով հնարավոր է հաստատել, որ Ղութլու Արսլանը ցածր ծագում ուներ, ապա նույնկերպ հնարավոր է մտածել, որ այդ արտահայտություններով հեղինակը պարզապես նպատակ ուներ նվաստացնել Ղութլու-Արսլանին: Ղութլու-Արսլանին դժվար է համարել ցածր ծագում ունեցող անձ, հիմնվելով այն փաստարկի վրա, որ Գիորգի III-ն իր կառավարման վերջին շրջանում պետական պաշտոնների էր նշանակում միայն ցածր սոցիալական ծագում ունեցող՝ ոչտոհմիկ անձանց, և քանի որ Ղութլուն նույնպես այս շրջանում էր նշանակվել Մեճուրճլեթուխուցեսի (արքունի զանձապետ), կարելի է ենթադրել, որ նա ևս ուներ ոչ ազնվական ծագում... Ոչ մի տեղեկություն չկա այն մասին, որ Գեորգի III-ի կողմից իր թագավորության վերջին շրջանում նշանակված բոլոր պաշտոնյաներն առանց բացառության ունեին ոչ ազնվական ծագում ...

Բացի այդ, այն փաստը, որ 1184 թվականին իրենց առաջին խռովության ժամանակ ոչ ազնվական ծագում ունեցողների դեմ դուրս եկած մեծատոհմիկ ընդդիմադիրները, ոչ մի տեղ չէին պահանջում Ղութլու-Արսլանի պաշտոնանկությունը, մատնացույց է անում, որ Ղութլու-Արսլանն ոչտոհմիկ չէր ... Ավելին, Ղութլու-Արսլանն ակտիվացավ և փորձեց դառնալ Ամիրսպասալար (զորքի գլխավոր հրամանատար) հենց այն ժամանակ, երբ հաջողությամբ ավարտվեց ոչ ազնվական ծագում ունեցողների դեմ ընդդիմության պայքարը:

Ղութլու-Արսլանի համախոհներին հնարավոր չէ վերագրել երրորդ դասին նաև նրանց առաջնորդի քաղաքական գաղափարախոսությանից ելնելով, քանի որ նրա գաղափարախոսության հիմնական տարրը՝ իշխանությունների բաժանման տեսությունը, բավականին հին է: Այն հայտնի է դեռևս անտիկ դարաշրջանից, ինչպես նաև միջնադարում և միևնույն ժամանակ իրենց քաղաքական պայքարում այն օգտագործում էին ոչ միայն երրորդ դասի, այլ նաև ֆեոդալական ազնվականության ներկայացուցիչները: Իշխանությունների բաժանման տեսության հետ երրորդ դասի հատուկ կապը միայն այն է, որ այն այս տեսությանը ավարտված տեսք է տվել և շնորհել իր քաղաքական գաղափարախոսության հիմնական հենակետի դերը:

Վրաստանի պատմության ակնարկներ, հատոր III, 1979 թվական, էջ 304-309